Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի
մարզպետ պարոն Արամ Խաչատրյանին

ՀՀ քաղաքացի Շուշանիկ Սաֆարյանից,
ք. Երևան, Քաջազնունուն 11, բն. 10,
+37499060489, shushanik.safaryan@gmail.com

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Խաչատրյան,

Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) կովկասյան գրասենյակի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում դիմում եմ Ձեզ խնդրանքով տրամադրել աջակցություն ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների (ԲՀՊՏ) և բնության հուշարձանների վրա զարգացման ծրագրերի ազդեցության ուսումնասիրության համար տվյալների տրամադրման հարցում:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասի» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ վերը նշված առաջադրանքը իրականացնելու համար խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ **Լոռու մարզի տարածքում տրանսպորտի, էներգետիկայի, հանքարդյունաբերության, զբոսաշրջության բնագավառում ընթացիկ և ակնկալվող ենթակառուցվածքային ծրագրերի վերաբերյալ, ներառյալ՝**

- ծրագրերի ամբողջական ցանկը դասակարգված ըստ կարգավիճակի՝ ընթացիկ, մեկնարկային փուլում, նախագծման փուլում, հանրային քննարկման փուլում կամ առաջարկված
- ծրագրերի ամփոփ նկարագիրը, ներառյալ կատարված և նախատեսված գործողությունները
- ծրագրերը՝ առդիր քարտեզներով

Բացի վերը նշված տեղեկություններից, առկայության դեպքում, խնդրում եմ տրամադրել այլ տվյալներ:

Լոռու մարզում գտնվող ԲՀՊՏ-ների և բնության հուշարձանների ցանկը ներկայացված է հավելվածում:

Կանխավ շնորհակալ եմ,
Սաֆարյան Շուշանիկ

Հուլիսի 22, 2021

Հավելված.

Համաձայն պաշտոնական աղբյուրների Լոռու մարզի տարածքում են գտնվում.

ԱՅԱՍՏԱՆԻ ԲՀՊՏ-ՆԵՐԸ, ՍՏԵՂԾՈՒՄԸ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԶԵՐԻ

ԲՀՊՏ-ի անվանումը	Կառավարության որոշման համարը	Նպատակը	ՀՀ մարզը	Զբաղեցրած տարածքը(հեկտար)
Գյուլագարակի	ՀՍՍՀ Մինիստրների սովետի 1958 թ. սեպտեմբերի 13-ի N Պ-341	ռելիկտային սոճու անտառների պահպանություն	Լոռի	2 576.0
Կովկասյան մրտավարդենու	ՀՍՍՀ Մինիստրների սովետի 1959 թ. հունվարի 29-ի N 20	ռելիկտային Մրտավարդ կովկասյան տեսակի պահպանություն	Լոռի	1 000.0
Մարգահովտի	ՀՍՍՀ Մինիստրների սովետի 1971 թ. ապրիլի 9-ի N 212 կարգադրություն	խոնավասեր անտառների և դրանց բնորոշ կենդանական աշխարհի պահպանություն	Լոռի	3 368.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ

Երկրաբանական հուշարձաններ

«Անանուն» զոլավոր դայկաներ	Լոռու մարզ, Լալվար գետի կիրճ
«Անանուն» դայկաների համակարգ	Լոռու մարզ, Գարգառ գյուղից 5 կմ հվ, Պուշկինի լեռնանցքի մոտ
«Գետնանձավ» անձավային թունել	Լոռու մարզ, Լոռիբերդ գյուղից 2 կմ հվ-արլ, Ձորագետի ձախ ափին, հունից 40 մ բարձրության վրա

Ջրագրական հուշարձաններ

«Թռչկան» ջրվեժ	Լոռու մարզ, Չիչկան գետի աջակողմյան Թռչկան վտակի վրա

Կենսաբանական հուշարձաններ

«Մրտավարդ կովկասյան»	Լոռու մարզ, Պուշկինի լեռնանցք